**Վ Ճ Ռ Ե Ց**

1. «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի կողմից 2025թ.-ի հունիսի 05-ին կնքված Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու պահանջի մասին **հայցը բավարարել.**

***1.1. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի կողմից 23.01.2026թ. թիվ 58 ծանուցմամբ 2025թ.-ի հունիսի 05-ին կնքված Ջերմուկ քաղաքի ըմպելասրահին կից լճակում գունաձայնային շատրվանների կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՋՀ-ԳՀԾՁԲ-25/2 պայմանագրի միակողմանի լուծում:***

2. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքից հօգուտ «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի բռնագանձել 30 000.00 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքից հօգուտ «Ա-ԷՆ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի բռնագանձել 100 000.00 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

4. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

7. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր`    **Արման Օհանյան**

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք
ում մուտքագրելով IE47-561D-4F86-99C6 իսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ` cabinet.armlex.am*